

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցին. Тифлис, Редакция «Мелк».

Կամ Тифлис, Редакция «Мелк».

Տ է Լ Ե Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր առաւօտեան 10 կոպէկով.

Տ է Լ Ե Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Իրաւունք եւ պարտականութիւն.—Ներքին
Տնտեսութիւն. Սեւ ծովի ափերում. Նամակ
խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
ճիւղաբաժնի. Արտաքին լուրեր.—ՀԵՒՆԱԳԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Բօրչալուի գաւառից.

ԻՐԱՆԻՆԻ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հաճութեամբ կարող ենք հաղորդել, որ
Ներքին տնտեսական հարցեր բա-
ւարար լուծում ստացաւ: Վեհափառ Կա-
թոլիկոսը նպատակադրամբ գտաւ լիազո-
րութիւն տալ հոգաբարձութեանը շարուն-
ակելու իր գործունէութիւնը առաջվայ
պէս, զեկեկվար ունենալով իր համար զբո-
րոյի շահերը եւ բարգաւաճումը:

Այդպիսով վերջ արվեց մի հարցի, որ
առաջ էլ բերել բազմաթիւ տարակուս-
անքներ եւ իրարանցումներ թէ հոգա-
բարձական շրջանում, թէ զարգացան
գործին մօտ գտնվող անձանց մէջ եւ թէ
չարարականութեան խաւերում: Վեհափառի
այդ կարգադրութեամբ հոգաբարձութեան
համար հարթված է գործունէութեան
անսպասելի, որը սակայն որոշ ծանր պա-
տասխանատուութիւն ու պարտականու-
թիւններ է դնում նոյն հոգաբարձութեան
վրա զարգացնել մանկավարժական եւ վարչա-
կան առաջադրանքներ վերաբերութեամբ:

Երբ որ հոգաբարձութիւնը կաշկանդված
է իր գործունէութեան մէջ, նա կարող է
զարգացնել պահպանութիւնները վերադրել ու-
րիշներին միջամտութեանը եւ այդպիսով
իրանից թօթափել պատասխանատուութեան
ծանրութիւնը: Բայց երբ նրան արված է
որոշ ազդեցութիւն իր գործադրութեան
մէջ, երբ նրան արված է իրաւունք հրա-
ւիրելու իր ցանկացած տեսչին, այն ժա-

մանակ նա պատասխանատու է զարգացնել
գործերի վերաբերութեամբ աւելի մեծ
չափով, քան սահմանափակումների ժա-
մանակ:

Մենք գիտենք, որ կրթական գործը
Ներքին տնտեսական զարգացում բաւական
կարգաւորվել է վերջին տասնամեակի ընթաց-
քում, բայց նա դեռ հեռու է կատարել-
ութիւնից եւ կարօտ է մի շարք բարե-
փոխումների, ուրպէս զի նա կարող լինի տալ
իր սաներին ամբողջացրած կրթութիւն եւ
ստոր չը լինի գիմնագիտական իրագոր-
ծած ծրագրերից:

Ներքին տնտեսական զարգացում պէտք է օրինակ
ծառայէ Երեւանի, Շուշու եւ ուրիշ, օրի-
նակ, թաւրիզի ապագայ կենտրոնական եւ
միւս զարգացնելի համար: Եւ որքան աջող
կերպով նա կազմակերպէ կրթական գործը,
այնքան նա զերաւարտ կը լինի նոյն
գործը միւսների համար:

Հոգաբարձութիւնը պէտք է մշտապէս
իր աչքի առաջ ունենայ այդ պատասխա-
նատուութեան ուղղականը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԵՐՈՒՄ

Գարնանը, հողերը մշակելիս, գիւղացին կա-
րիք է գտնում մի քանի հարկեր ընդունելու իր գոր-
ծերը կարգի դնելու համար: Այդ պատճառով
նա դիմում է վերոնշեալ աղաներին կամ այն
մի քանի դրանց հայերին, որոնք իրանց մարդ-
կութիւնն ու խիղճը ծախած—մի կողմ դրած—
էրէշային տոկոսներով փող են բաց թողնում
եւ որոնք իրանց վախճանութեան պատճառով
այնքան մաշել են դատարանների շէնքերը...
Եւ որքան տուն են քանդել, որքան անբաղդու-
թիւններ զուռ են բացել դրանք իրանց թշուառ
արիւնակեցների առաջ եւ իրանց պատճառով
վարկազուրկ արել զբացեցներին...

չեն մնացել գերմանացիներից եւ նրանք էլ մեծ
քանակութեամբ սեփական հողեր են գնել:
Մասնաւոր օրինակներ հետեւել են հայ գիւղերից
Մանազքարն ու Նոյսմէլը: Զր նայելով, որ հա-
յերը ազգաբնակչութեան մեծամասնութիւնն են
կազմում, բայց երբեք չեն մտածում ապագայի
վրա եւ իրանց անհամարաչափութեան պատճա-
ռով համայնական օյտերով հողեր չեն գնում:
Զիչէ է, կան առանձին անհատներ գիւղացիե-
րից, որոնք սեփական հողեր են ձեռք բերել,
բայց դրանց նպատակն է եղել միշտ շահագոր-
ծել հարեւանի արդար աշխատանքը: Հայերը
վարակված են վերջին մօղայականութեամբ եւ
քանի գնում, տեւելի շտալ ծախքեր են անում,
մասնաւոր մեր գիւղերում:

Ազգիկ մարդու տալը մեզանում պատուհաս
է. ով աղքիկ ունի, նա կորուս. վերջին աղքատն
էլ աղքիկան պակեցում 300 ռուբլի ծախք ունի:
Գիւղացին միշտ երանի է տալիս այն օրերին,
երբ աղքիկ մարդու տալիս տղատիրոջը ճար-
ըզը էր տալիս, իսկ հարսանիքը կանչով լի-
նելով, հիւրերն էլ ծախքերն էին ծածկում: Գիւ-
ղացուն շուքարեցող ծախքերից մէկն էլ քելե-
խի ու սուր սեղանի տեղը սովորութիւնն է,
ուր տէրտէրը երեք օր կուշտ ուտելուց յետոյ,
մեռելատէրը պարտաւորեցուցիչ պիտի տէրտէ-
րակնոյ ու նրա ծառաների համար էլ մաս ու-
ղարկէ մի սինի փաւ, մի խաչած հաւ, մի
գլուխ շաքար, մի քանի թափայ հաց, հետն էլ
մի թունգի գինի:

Ազգաբնակչութեան տաներորդ մասը ընտել-
հողեր ունեն, որոնք օգտվում են համաձայն
1873 թվ. կանոնադրութեան եւ հողատէրին
բերելից տասնամորթ է վճարում: Գաւառնե-
րորդ մասը ապրում են զանազան պայմաննե-
րով մասնաւոր հողատէրերի հողերի վրա եւ
երկար տարիներ ընթացքում կանոնաւոր տնե-
րին տւելով չէ կարողանում հետանալ, իսկ
կալուածատէրերը այնքան են խեղդում, որ ու-
սալով հազիւ կարողանում է օրվայ ցամաք

Գիւղացին վեր է առնում նրանցից պէտք
եղած գումարը: Բայց, ի հարկէ, ողորմութիւն
խնդրողի նման հազար անգամ վիզ ճկելով եւ
ծնրադրելով վախճանների առջեւ էլ այնու-
հետեւ նա իրաւունք չունի իր ապրանքը ու-
րիշին ծովելու, որովհետեւ իր «թուճարը»
(ապագող-վաճառական) այս ինչ աղան է, որ
բարեհաճ էլ է գարնանը տալ իրան մի քանի
100 ռուբլիանց, թէեւ տոկոսով:

Գիւղացին վախճանուից վերցնելով այդ փողը
իր բոլոր ունեցածովը ենթարկվում է աղաչի
կոնտրոլին. մի խօսքով պարտաւոր պարտա-
տիրոջ ձորան է, մինչեւ որ 10 ռուբլի արժեքող
ապրանքը 6—8 ռուբլու աղային տալով վճարէ
իր բոլոր պարտքը...

Եւ մի անգամ առիթ ունեցայ լինելու Անա-
պա քաղաքից մօտ 30 վերստ հեռավորութեան
վրա գտնվող գերման գաղութում: Դրանք ուր,
մեր գիւղացիք ուր, Անապին հակասութիւնը
խելոյն աչքի է գործում:

Այստեղ գաղութի իւրաքանչիւր անգամ միայ-
նակ տէր է իր արդիւնաբերածին. իսկ խելացի
միջոցներով սպառելը վերապահված է «սպա-
ռողական կազմակերպութեան» վար-
չութեանը, որ իր կողմից բանակցութեան
մասնով թէկուզ մի եւ նոյն՝ հէջ վերել յի-
շած վաճառականների հետ՝ մերկաներից անհա-
մեմատ աւելի լաւ գնով են ծախում իրանց
գաղութի արտադր:

Եթէ վաճառականը չէ համաձայնվում տալ
նրան—այդ վարչութեանը—ներկայացված ապ-
րանքի իսկական գինը՝ այդ դէպքում վարչու-
թիւնը իր անդամներից մէկի կամ երկուսի հետ
ապրանքը նմայնել է ուղարկում Նօվոօրոսիյսկ
եւ այլ տեղ: Այդտեղ նրանք իմանում են սպա-
ռելի նիւթի ընթացիկ գինը:

Վարչութիւնը, որ բաղկացած է գաղութի
«գործը հասկացող» անդամներից, իրաւունք ունի
բանակցութեան մասնել նոյն իսկ արտաւաճ-
մանեան ֆիրմաների հետ, որոնք էլ ծախում է
ամբողջ գաղութի ապրանքը, եթէ դա աւելի

ձեռնտու է, քան տեղացի վաճառականների
առաջարկած պայմանները:

Վարչութեան կանոնաւոր մատնաներում
նշանակված է, թէ օր գիւղացին «ընթաց» ապրանք
է ներմուծել հասարակաց շտեմարանը,
որ տեսակից, չափը որքան, որքան է կշռում այդ
ապրանքը, համեմատելով միւսների հետ՝ նրանք
ինչ աչքի գարնող առանձնապատկութիւններ
ունեն, շտեմարանի օր մասում եւ ինչ Ու-ի
տակ է ամբարած եւ այլն: Այդ ամենը խիստ
որոշ նշանակված է եւ ապրանքի տիրոջ ապա-
հովագիր տուած:

Երբ վարչութիւնը ձեռնտու պայմաններով
սպառել է ապրանքը, ապա իւրաքանչիւր գիւ-
ղացի նրա գանձապահից ստանում է իր հաշիւը
միանուագ:

Դեռ չեն խօսում գաղութի խնայողական
դրամաբիլի մասին...

Թէ սպառման այդ ձեւը որքան է նպաստում
խիշալ գաղութի գիւղատնտեսութեան զար-
գացման եւ թէ նրանք, մեր կողմից ապրող
այդ գերմանացիք, նիւթապէս որքան բարձր են
կանգնած մեզինք,—այդ զգուշ եւ խոստովա-
նում է մեր գիւղացին ամեն օր: Բայց նրան-
ցից օրինակ վերցնել չէ կամենում:

—Ինչու, հարցնում էք դու:

—Նրանք եւրօպացի են, պատասխանում է
մեր գիւղացին, նրանք կը վաճառեն նրանց,
որովհետեւ մեր հայերը գործելու բոլորովին
ուրիշ ձեւ են կտակել մեզ, որին հետեւել ենք
եւ հետեւում ենք...

Բայց այդ ողորմելիները չեն ցանկանում մի
րօպէ մտածել, որ ժամանակի հետ փոխվում
են եւ կեանքի պայմանները եւ գործունէու-
թեան զանազան եղանակները: Որ իրանց հայ-
րերը դեռ մի քառորդ դար առաջ Լադիստանի
օտերում՝ ոտքերը բարկի, գլուխները բաց,
կրծքերը մերկ, անուխի պարկը ուսերին, շա-
լակի ծանրութեան տակ տնջալով՝ բաղնիք էին
դիմում, «շալակները» ծախելու եւ աղի ու օղիի

ցիններ, իսկ մասնաւոր կալուածատիրոջ գիւ-
ղացին աւելի քիչ: Ի հարկէ, այս պայպէս էլ
պիտի լինի, քանի որ բոլորն էլ ուսումնասիրած
լինելով իրաւունք ունեն հաւաքաբար ապէս օգտ-
վելու արքունի հողերից, որոնց վրա ապրող գիւ-
ղացին, մասնաւոր կալուածատիրոջ գիւղացու
պէս, բերել մի չորրորդը չէ վճարում, կամ
տնջում է նրա անարդար պահանջների տակ:
Սակայն, կան ուրիշ հանգամանքներ, որոնք
վրա արժանի է առանձին ուղադրութիւն դարձ-
նել: Օրինակ, շատ անարդար է, երբ Լօռու
գաւառաւորները արքունական հողերի վրա ապ-
րող՝ Բօլապիւրան, Շահալու, Լադիկուտ եւ
Սէյդիբադղի գիւղերը իւրաքանչիւր դեռեւտին
հողին նոյնպէս հարկ տան: Որքան Բօլալու
եւ Սէյդիբադղի գիւղերը իւրաքանչիւր գիւղացու
քանի որ վերջիններիս հողերը, բացի հացահա-
տիկի ընտիր լինելուց, երեք տնջում էլ աւել
են եկամուտ տալիս: Հարկաբարձանքը մի
դեռեւտին վարելահողի բոլոր ծախսեր՝ վա-
րելը, սերմելը, սերմը, հնձելը, կասելը դուրս
եկած՝ զուտ արդիւնք են հաշուել հինգ ռուբլի,
որից եւ պիտի հարկ տալ 120% կամ տասը
կոպէկ, այսինքն յիսուն կոպէկ դեռեւտինին,
այն ինչ Լօռու եւ Թիլայէթի գաւառաւորնե-
րում չվճարական պանիրների գործարանները
հազարաւոր դեռեւտինների խոտհարքի մի դե-
ռեւտինի համար տալիս են իրենց արօտ 7 կոպ.,
զուտ արդիւնք հաշուելով 70 կոպէկ, իսկ եթէ
մէկը ցանկանար յիշեալ խոտահարքից մի դե-
ռեւտինի խոտ գնել ու հնձել, նրան տաս ռուբլուց
պակաս չեն տալ, որի վրա տէրը ոչ մի ծախք
չէ արել: Ահա որտեղ է անարդարութիւնը.
փոխանակ մի ռուբլի տալու, 7 կոպէկ է տա-
լիս: Իսկ այս հողատէրերը գիւղացիներ չեն,
այլ մասնաւոր հարուստ մարդիկ:

Անտաններ իւրաքանչիւր դեռեւտինին հաշ-
ւած է զուտ արդիւնք մի ռուբլի, որի համար
պիտի վճարէ տէրը տասը կոպէկ, կրկին ան-
արդարութիւն. այն անտանները, որոնք ընկած

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՈՐՉԱԼՈՒԻ ԳԱՆԱՍԻՐ

Թէեւ Բօրչալուի գաւառը Թիֆլիսի նա-
հանգում ուղադրութեան արժանի ամենամեծ
գաւառներից մէկն է, բայց նա բոլորովին ա-
նուշադիր է թողնված: Բօրչալուի Թիֆլիսի
նահանգում գինեգործութեան մէջ Կախէթից
յետոյ երկրորդ տեղն է բռնում, իսկ երկրա-
գործութեան, անասնապահութեան եւ այլ ար-
դիւնաբերութիւնների կողմից—առաջին տեղը:

Բօրչալուի ունի նոյն իսկ հարուստ հանքեր՝
պղինձ, ապակի, չուգուն եւ արծաթ, որոնցից
այժմ չանագործվում են առաջին երկրները:
Լօռու եւ Թիլայէթի գաւառաւորների որոշ
տեղերում արօտատեղերը այնքան ծաղկաւա-
ն են եւ հիւթալից ու հարուստ անուշաւամ ջը-
րերով, որ զուր չեն նրան համեմատում Շվեյ-
ցարիայի հետ, քանի որ այդ տեղերում գրան-
ված տաքից աւելի պանիր գործարանները ա-
ռանց քիմիական խառնուրդների տալիս են մեծ
քանակութեամբ չվճարական ընտիր պանիր-
ներ: Դժբաղդաբար, վերջերս պանիրների գինը
կովկասում ընկած լինելու պատճառով, Ռու-
սաստան տանողներն էլ վնասներ կրեցին: Գոր-
ծարանատէրերից երեքը հայեր են, մէկը վրա-
ցի, մնացածը գերմանացի եւ մայրական Գաւա-
ռի ազգաբնակչութեան մէջ ամենից բաղաւառը

Նկատելի է իր կանոնաւոր կուշտուրական կեանքի
մեծ քանակութեամբ սեփական հողեր է ձեռք
բերել եւ փառաւոր ապրուստ ունի, միայն
ժայռայից փակված կեանք վարելով, կուշտու-
րական ոչինչ ազդեցութիւն չէ տարածում հա-
րեւան գիւղերի վրա:

Վօրոնցովկա եւ Իմիր մայրական գիւղերը յետ

Վ. Մեհրաբեան

